ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԱՊՐԻԼԻ 2026թվականի N 033

ԱԼԵՔՍԵՅ ՄԻՆԱՍՈՒԵՎ ԱԼԵՔՍԵԵՎԻՉԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի «Չափից ավելի վճարված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի կարգը սահմանելու մասին» N 920-Ն որոշումով և հիմք ընդունելով Մինասուև Ալեքսեյ Ալեքսեևիչի դիմումը՝ որոշում եմ.

1.Ալեքսեյ Մինասուև Ալեքսեևիչին սեփականության իրավունքով պատկանող, Ֆիոլետովո համայնքում հաշվառված և օտարված NISSAN ROGUE 2.5 մակնիշի 95MA900 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի գերավճարը՝ 16568 (տասնվեց հազար հինգ հարյուր վաթսունութ) դրամը (հաշվեհամար 900235402113) հաշվանցել և մարել Ալեքսեյ Մինասուև Ալեքսեևիչին սեփականության իրավունքով պատկանող, Ֆիոլետովո համայնքում հաշվառված ՈՒԱԶ 31512 մակնիշի 37LP545 պետհամարանիշով մեքենայի գույքահարկի գծով հարկային պարտավորությունը (հաշվեհամար 900235402113):

2.Ֆիոլետովո համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետին՝ իրականացնել գերավճարի հաշվանցման աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՉԻՉՅՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԱՊՐԻԼԻ 2026թվականի N 034

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի փետրվարի 9-ի հ. 15-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 26-րդ կետով՝ որոշում եմ.

1. 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար Ֆիոլետովո համայնքի տարածքում առանձնացնել անվճար վահանակ՝ համաձայն հավելվածի:

2. Առանձնացված վահանակի վրա յուրաքանչյուր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար յուրաքանչյուր տեղում հատկացվում է մեկ A4 չափի 21սմ լայնությամբ, 29.7սմ բարձրությամբ տարածք:

3. ՈՒԺը կորցրած ճանաչել Ֆիոլետովո համայնքի ղեկավարի 17 ապրիլի 2026 թվականի « Ֆիոլետովո համայնքի տարածքում Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2026 թվականի հունիսի 07-ին կայանալիք ընտրությունների նախընտրական քարոզչության իրականացման համար քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար անվճար վահանակներ առանձնացնելու մասին» թիվ 028-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՉԻՉՅՈՎ**

Հավելված
Ֆիոլետովո համայնքի ղեկավարի

2026թ. ապրիլի 28-ի N 034-Ա որոշման

ՑԱՆԿ
2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ

Վ	ՀԱՄԱՅՆՔ	ՀԱՍՑԵ	ՄԱԿԵՐԵՍԸ /Ք.Մ/
1	Ֆիոլետովո	1 փողոց, շենք 141, դիմային հատված	2

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ